

Գ Ր Ա Խ Օ Ս ՈՒ Թ Ի Ի Ն

- ՇՁԻԴԻԻՆ՝ 1) Մոռացկոտ ոչխար } Թարգմ. Մկրտ. Ղազարեանց.
2) Զատկի գիշեր } Հրատ. Թիֆլ. Հրատ. Ընկ...Թիֆլ..
3) Ազատամիտ } տպ. Վարդ., 40 երես. գինն է 10 կ.

«Մոռացկոտ ոչխարը» մի փոխաբերութիւն, ալլեգորիա է:

Բովանդակութիւնը հետեւեալն է.

Ամենահին ժամանակներից ոչխարները մարդու ձեռքի տակ են եղած: «Մարդը ստեղծում է ոչխարների առանձին տեսակներ... Ոմանց պահում են մսի համար, ոմանց՝ ճարպի, մի քանիսին տաք մուշտակների համար: Իրանք ընտանի ոչխարները ամենից քիչ են չիչում իրանց ազատ նախահօրը և իսկական խելօք անւանւում է միալն ալն ոչխարը, որ ոչինչ չի չիւում և չի գիտակցում բացի կանաչից, խոտից և դարմանից: Բայց մի անգամ խոլի մէկը քնեց և երազ տեսաւ. երազում տեսածը միալն դարման չէր, որովհետեւ երբ զարթնեց, լուզած էր: Նա աշխատեց միտը բերել, ինչ որ պատահեց. բայց ոչինչ չը կարողացաւ չիչել: Մի ինչ որ հեռաւոր տարածութիւն արծաթի նման փալլում էր, «Լրիշ ոչինչ»: խոլը տանջւում է, աշ-

խատելով հասկանալ ալդ երազը. ալդ նոր զգացմունքին, իրան տանջող հարցերին բաւականութիւն տալու համար՝ նա դիմում է մաքիներին:

«Բայց մաքիները համակրութեան նշան անգամ չէին ցուց տալիս նորա անհանգստութիւններին և մինչև անգամ կծու հեղեութեամբ անւանում էին նրան խելքին զոռ տուղ, փիլիսոփա, որ ինչպէս չալտնի է ոչխարական լեզուով աւելի վատ նշանակութիւն ունի, քան «անպիտան» խօսքը»:

Հովիւ Նիկիտան հասկանում էր խոլի դրութիւնը, «բայց նա ոչխարների համար միալն մի պարտադիր ակսիոմա էր ճանաչում—եթէ ծնւել ես ոչխարների դասակարգի մէջ,—ասում էր նա լրջօրէն, նորա մէջ էլ, կը նշանակէ, պէտք և ապրես ու մեռնես»: Բայց հէնց ալդ բանը խոլը չէր կարող տանել, Հէնց «դասակարգն» էր որ նորան տանջում էր, ոչ թէ ալն պատճառով, որ վատ էր

ապրում, ալլ ալն պատճառով, որ քանի սկսել էր երազներ տեսնել, նորա մտքին դալիս էր շարունակ մի ինչ որ «ուրիշ դասակարգ»։ Խոլին անհանդսացնող մտքերը ու զգացմունքները հալ ու մաշ են անում նրան, նա չի կարողանում տանել և մեռնում է։

Խոլի մահը հովիւ Նիկիտան բացատրում է նրանով, որ նա երազում «ազատ ոչխար» էր տեսնում։ Խոլի մահւան առիթով անբը ախպիսի խորհրդածութիւններ է անում. «մի ուրիշ տեղ կարելի է ալս ոչխարից ած զուրս զար, իսկ մեղանում ալս պէս է օրէնքը։ Նթէ գու ոչխար ևս, ուրեմն ոչխար էլ պէտք է մնա», առանց դիմիզ զու տալու, տիրոջ էլ լաւ կը լինի, քեզ էլ լաւ կը լինի, անբութեանն էլ հաճելի կը լինի»։

Մենք ալսքան մանրամասն պատմեցինք բովանդակութիւնը ցոյց աալու համար, թէ ինչ է ներկայացնում ալս փոխաբերութիւնը, թէ ուու հասարակութեան որ շրջանի նկարագրութիւն է սա։ Ինչպէս երևում է բովանդակութիւնից, ալստեղ զուրս է բերած ուու հասարակութիւնը ալն շրջանում, երբ ամբողջ 20—25 միլիոն ժողովուրդ ոչխարի դեր էր կատարում փոքրամասնութեան համար. ախպիսով գրւածքը գլխաւորապէս պատմական նշանակութիւն ունի. ասում ենք գլխաւորապէս, որովհետեւ մարդկային լարաբերութիւնները, հալեացքները ալնքան շուա չեն փոխւում և գրւածքը մի որոշ չափով ներկայացնում է ժամանակակից հասարակութիւնը։

Աւելի ժամանակից նշանակու-

թիւն ունի «Ազատամիտը»։ Բովանդակութիւնը հետեւեալն է. «մի երկրում ապրում էր մի ազատամիտ.—Երեք գործօններ—ասում էր նա.—պէտք է լինին ամեն մի հասարակային կեանքի հիմքը—ազատութիւն, ապահովութիւն, ինքնագործունէութիւն։ Ալս դեռ քիչ է. ազատամիտը ոչ միայն ազնիւ էր մտածում, ալլ և ջանք էր անում բարիք գործելու, Բայց նա կարծում էր որ «իգէալը հանրամատչելի դարձնելու համար, անհրաժեշտ է նորան մանր կտորներով վերածել և ալդ ձեռով գործ դնել մարդկութիւնը տանջող ցաւերը բժշկելու համար»։ Ալսպիսով նա ոչ մի անհնարին բան չէր պահանջում, ալլ միշտ միայն «որքան հնարաւոր էր», մի խօսք, որը երկու ընդհարող կողմերից մէկին ստիպում է չալանի չափով զուրս գալ սահմանափակութիւնից, իսկ միւսին նշանաւոր չափով սահմանափակել իւր պահանջները»։

Ահա ալս իղէալներով, գործելու ալս եղանակով նա սկսում է իւր գործունէութիւնը, Հասարակութեան ամենալաւ ներկայացուցիչները գիտնականները հաւանում են ազատամտի գործելու ալդ եղանակը։ Ազատամիտը «ալստեղ կրճատում է, ալնտեղ պակսեցնում, իսկ մի ուրիշ տեղ բոլորովին թագնում է»։

«Սակալն քանի որ ազատամիտ նպատակներն իրագործում էին, որքան հնարաւոր էր, գիտուն մարդիկ հասկանում են որ նոն իսկ ալդ ձեռով էլ նորա իղէալներից լաւ հոտ չի փչում։ մի կողմից չափից զուրս լալն ևն ծրագրած, միւս

կաղմից անքան հասուն չեն, դեռ պատրաստ չեն ընդունել—» նրանք ասում էին եթէ հնարաւոր եղածին չափ չի կարելի, ուրեմն բաւականացիր նրանով որ «գոնէ էլի մի բան» կանես, ասի «գոնէ մի բան» էլ բան է: Զիջումները լինում են զիջումների լեռնից: Իդէալները իրա-գործնելու համար նա սկսում է «կարմարել ստորութեան, կեզտոտութեան հետ» և ալդպէս գործել: Բանը վերջանում է ի հարկէ բարոյական կատարեալ անանկութեամբ: Նոյն իսկ երբ իդէալների վերջին փշրանքն է մնում, նա ալս դէպքումն էլ արժանանում է մէկի թուքին, որը ստորութեան հետ լարմարելով, անկիւնից է թքում:

Գրեաձքի միտքն է ցոյց տալ թէ ուր է տանում իդէալների աստիճանաբար գիջելը, թէ ինչ սարսափելի ընդդիմադրութիւն է ցոյց տալիս ալդ երկրի հասարակութիւնը մի անպիսի գործի չի, որը շատ սահմանափակ պահանջներով և որ գլխաւորն է՝ սուրբան հնարաւոր է՝ պրինցիպով է մտնում կեանքը: Եւ չափազանցրած ու սև գոյներով ներկած պատկերը անքան էլ հեռու չէ օրիգինալից:

«Զատկի գիշերում» հեղինակը պատմում է մի աւանդութիւն, թէ ինչպէս ալդ գիշերը աշխարհ է դալիս Քրիստոս: Որհնելով բնութիւնը, նա դիմում է մարդկանց, Ամենից առաջ գէշ և լին արտասուղ, աշխատանքի լծի տակ կորացած, կարիքներով ծանրաբեռնաւ մարդիկ: Քրիստոս օրհնում է նրանց, խոստանում է մօտալուտ փրկութիւն և վախճան կրած տանջանքներին, Յետոյ նա դիմեց վաշխաւորներին, խոտասիրտ իշխանաւորներին, աւաղակներին, կեղծաւորներին, կեղծ բարեպաշտներին և անարդար դատաւորներին: Կանդիմանեց նրանց չարութիւնը, բայց և նրանց նա խոստացաւ փրկութիւն, եթէ փոխեն իրանց կեանքի ընթացքը: Միակը որին չկարողացաւ ներել նորա բարի սիրտը, գա Յուդան էր, մատնելը:

Ահա երեք գրեաձքի բովանդակութիւնը, երեքն էլ կարդացւում են հետաքրքրութեամբ: Ինչ վերաբերում է թարմանական լեզւին, լեզուն բաւականի լաւ է, չը նախելով ան դժարութիւններին, որ ներկայացնում է Շչեդրինի թարգմանութիւնը:

B.

ՕՍՏՐՈԳՈՐՍԿԻ, Վիկտոր.—«Օրէնանի կոյսը (ըստ Շիլլերի) թարգմ. Յ. Խ.—Հրատարակութիւն Թիֆլիսի ընկ. հայ. գրք. հրատ. տպ. Շաբաձէի. 1891 թ., 98 եր. գինն է 25 կոպ.:

Աւելորդ ենք համարում բերել վերցրած է Շիլլերի նովանսուն գրքի բովանդակութիւնը. գրքի նիւթը ւաճից և շատ տեղ նոյն իսկ Շիլ-